



ԳԳ Արարատի մարզի Լանջազատ /Զովաշեն/
Գեղ. (Տեղ.) 091-58-28-87

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՁԱԶԱՏ ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՈՒՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2017 թվականի հուլիսի 3 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ համայնի լսում: Նախագահում էր համայնքի ղեկավար Վ. Հակոբջանյանը, քարտուղարում էր համայնքապետարանի աշխատակիցի քարտուղար Ա. Մելքոնյանը: Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Վ. Դամիեյանը, ավագանու անդամների համայնքապետարանի աշխատակազմը, նշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժքույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ – Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Վ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2017 թ. առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՉԱՆԱԳՐՎԵՑ, որ

2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

համայնքապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 295 ընդունելություն: Ընդունելությունների ընթացքում բարձրագված խնդիրները քննարկվել են համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 340 տեղեկանք, ստացել 120 - ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում փոքրերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ռոտոգման ջրատարները և համայնքում գտնվող, կաղևոր նշանակություն ունեցող կամուրջները:

Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազորման, սահմանների ճշգրտման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին բուժաֆինիկատներով, և սերմերով ապահովելու հարցը: Համայնքի բնակչությանը տրամադրվել է 10 տոննա անոնիակային պարարտամյուր (սելիտրա):

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 565.0 հազար դրամ.

բ / գույքահարկ, որից՝ շենք և շինություններ – 23.6 հազար դրամ, ավտոմեքենաներ – 1490.0 հազար դրամ.

գ / տեղական տուրք՝ 50.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 272.0 հազար դրամ

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է հունվարի 28-ը՝ ազգային բանակի օրը, նշվել է կանանց միջազգային տոնը՝ մարտի 8 – ը, համայնքապետարանի կողմից նվերներ են տրամադրվել Լանջազատի միջնակարգ դպրոցում, նախակրթարանում, մարզադպրոցում, բուժամբույատորիայում և համայնքապետարանում աշխատող ընտր կանանց և աղջիկներին:

Միջոցառմանը ասմուրով և հայրենասիրական երգերով հանդես եկան Լանջազատ համայնքի մշակույթի տանը գործող « Ասմունքի խմբակի » սաները, ինչպես նաև « Զովաշեն » պարային համույթը:

Մայիսի եռամսռի կապակցությամբ մարզադպրոցում կազմակերպվել է հուշամրցաշար նվիրված՝ ազատամարտի վետերան Ռոբերտ Հակոբջանյանի հիշատակին: Մասնակիցներին տրվել է պատվոգրեր և մեդալներ, հանդիմներին նաև զավաթներ:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1040.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:


Հողարկավորության նպատակով՝ 140.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 470.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1322.0 հազար դրամ.

2017թ 2-րդ կիսամյակում նախատեսված է մի շարք միջոցառումներ և տոնակատարություններ:

ՀԱՍՏՆՆԵՐ ԳԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ